



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 7-ին, երկուշաբթի օրը, ժամը 11.30-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ, հոգևոր ճեմարանի ընդունելության սրահում տեղի ունեցավ 1975—1976 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը բացվում է թիվ արտասանված Տերունական աղոթքով, Հայաստանի պետական հիմնի նվագով և հոգևոր ճեմարանի քայլերգով:

Հոգևոր ճեմարանի վերակացու Միսաք սրկ. Մարգարյանը կատարում է ամավերջի հանդիսության բացումը:

Այնուհետև գործադրության է դրվում հոգևոր ճեմարանի ուսանողների ուժերով կազմված գեղարվեստական բաժինը, որը բաղկանում էր արտասանություններից, խմբերգերից ու նվագից:

Ճեմարանի երգչախումբը խանդավառորեն կատարում է «Էջ Միածինն ի Հօրէ», «Որք զարդարեցին» շարականները, «Հոյ նար» (Համբարձում Բերբերյան), «Ազգ փառապանծ» (Առնո Բաբաջանյան), «Հոդալլո» (Կոմիտաս վարդապետ), «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք» (Արտեմի Այվազյան) և «Էրեբունի-Երևան» (Էդգար Հովհաննիսյան) խմբերգերը:

Բ լսարանի ուսանող Բյուզանդ Գալայճյանը, Գ լսարանի ուսանողներ Վաչագան Ավետիքյանն ու Հովսեփ Պալըգյանը հանդես են գալիս հայերեն, Բ լսարանի ուսանող Աղասի սրկ. Բապունյանը՝ ռուսերեն, և Ա դասարանի ուսանող Արա Տաքեսյանը՝ անգլերեն արտասանություններով:

Բ լսարանի ուսանող Կիրակոս սրկ. Հովհաննյանը դաշնամուրի վրա կատարում է «Հայկական պար» իր ստեղծագործությունը: Նույն լսարանի ուսանող Լևոն սրկ. Բաղդասարյանը դաշնամուրի վրա կատարում է Սարգիս Բարխուդարյանի «Պար»-ը, և Գ դասարանի ուսանող Հրաչ Օղլուքյանը՝ Էդ. Բաղդասարյանի փոխադրությամբ «Հայկական ժողովրդական պար»-ը:

Բ լսարանի ուսանող Սորին սրկ. Մանդալյանը, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության, կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության և շնորհակալության մի ջերմ ուղերձ:

«Պատմության և հավերժի գիրկն ենք թողնում այս հանդիսավոր առավոտ՝ ի ուսանողական տարի ևս: Ուսանողներ և

դասախոսներ, հավաքված այսօր ճեմարանի կամարների ներքո, հրաժեշտ են տալիս անցած ուսումնական տարեշրջանին, որը, անցյալի գիրկը մտնելով, մի նոր էջ է ավելացնում սուրբ Էջմիածնի վանական այս դպրոցի պատմության մեջ:

Հին ժամանակներից մինչև այսօր Էջմիածինը եղել է հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կենտրոնը: Միածնաէջ այս վայրը ժողովարան է դարձել ուսումնաճարավ հայ երիտասարդների համար: Էջմիածնի անշեջ կանթեղն իր աստվածային լույսի ճառագայթներով լուսավորել է միշտ հայ պատանիների միտքն ու հոգին: Հոգով ու մտքով լիապես սնված, նաև հավատքի զորությամբ զինված Էջմիածնի դպրեվանքի ուսանողներից շատերն իրենց մտքի ու սրտի լույսերով ու գանձերով հարստացրել են հայ ժողովրդի հոգևոր, մշակութային գանձարանը:

Սերունդներ են անցել ճեմարանի կամարների տակով, բայց մնացել են նրանց հիշարժան գործերը: Նոր սերունդը՝ այսօրվա ուսանողներս, ոգևորված մեր նախնիների հերոսական պատմությամբ ու նրանց հաջողություններով, ուխտում ենք մի անգամ ևս անձնուրաց կերպով նվիրվելու մեր վեհ նպատակին՝ ծառայելու հայ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ մեր մանկահասակ հոգիները գտել են իրենց մտքի, սրտի օրորոցը: Տարիներ կանցնեն, և այսօրվա ուսանողների հոգում ցանված քրիստոնեական հավատի, հայրենասիրության ու ծառայասիրության սերմերը կընբերեն բարի ու խոստումնալից արդյունքներ. «Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր»: Ճեմարանական մեր կյանքի ընթացքում լուսավորվեց և ընդարձակվեց մանավանդ մեր մտքի հորիզոնը, և ավելի համոզիչ դարձավ Քրիստոսի քաղցր լուծը կրելու վեհապանծ ձգտումը:

Ամենից առաջ այս հանդիսավոր պահին երախտագիտություն և շնորհակալություն պետք է հայտնենք Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետին՝ ուսանողների հանդեպ ցույց տված Նրա մշտական հայրական սիրո և ուշադրության համար, որը մեզ պարտավորեցնում է ու խանդավառում մեր աշխատանքներում:

Սիրո անկեղծ զգացումներով երախտապարտ ենք նաև մեր սիրելի տեսչին՝ արժանապատիվ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանին, ողջ դասախոսական կազմին, որոնք նվիրել են իրենց ուսանելի և օրինակելի կյանքը սերունդներ դաստիարակելու սուրբ և շնորհակալ գործին այս դարավոր Հաստատության հովանու ներքո:

Շնորհակալության սրտագին խոսք ունենք նաև մեր սիրելի վերակացուներին:

Վեհափառ Տեր, հանուն ուսանողության հավատացնում ենք Ձեզ և մեր սիրելի դասախոսներին, որ մեր հոգում ցանած հոգևոր ու մտավոր սերմերը ապարդյուն չեն մնալու: Մենք ջանք չենք խնայելու՝ արդարացնելու համար Ձեր բարի հույսերը: Պիտի հետևենք մեր նախնիների օրինակին, պիտի աշխատենք հավատարիմ զավակները լինել այս նվիրական Հաստատության՝ ի փառս նրա պայծառության, և լինել արժանավոր զավակները նաև հայ ժողովրդի և մեր ազատ հայրենիքի»:

Հանդիսության երկրորդ բաժնում հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ արժ. տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը, որը համառոտակի, բայց ամբողջական ձևով ներկայացրեց հոգևոր ճեմարանի 1975—1976 ուսումնական տարվա աշխատանքային ընդհանուր պատկերը՝ շեշտելով մանավանդ, որ լրացավ հոգևոր ճեմարանի վերաբացման 30-ամյակը, 30-ամյակ, որի 20 տարիներն անցան անմիջական հսկողության և իմաստուն, հոգատար ղեկավարության ներքո ազգիս Վեհափառ Հայրապետի, Որն Իր սրտին ամենամոտիկ հաստատությունն է նկատել այս կարևոր օջախը՝ մեծ ու արդար հույսեր կապելով նրա կյանքի և գործունեության հետ, հայ եկեղեցու մե՛ր օրերի պայծառության բնագավառում:

Հոգևոր ճեմարանը 1975—1976 ուսումնական տարին փակում է 26 ուսանողներով.

Բ լսարան՝ 9 ուսանող
Գ դասարան՝ 8 ուսանող
Բ դասարան՝ 5 ուսանող
Նախապատրաստական դասարան՝ 4 ուսանող:

Այս տարի էլ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորել է Վեհափառ Հայրապետը: Դասախոսական կազմում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Իր զեկուցագրում տեսուչ հայրը նշում է, որ հոգևոր ճեմարանի «դասախոսական կազմը բարեխղճորեն կատարել է իր պարտականությունը և ոչ մի ջանք չի խնայել ուսանողությանը ներշնչելու հավատք, հայրենասիրական ոգի և ծառայության նվիրում՝ նրանց ապագա գործունեության ճանապարհի վրա»:

Հոգևոր ճեմարանի ուսանողներն իրենց ընթացիկ պարտականություններից դուրս զբաղվել են նաև ընթերցանությամբ, ֆուտ-

բոլի, թենիսի և մարմնամարզական այլ խաղերով:

Հաճախ հավաքույթներ են եղել Վեհափառ Հայրապետի մոտ, որտեղ ուսանողները լսել են բարոյա-դաստիարակչական բնույթի օգտակար զրույցներ և ուսանելի խրատներ:

Այս տարի հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի են ունեցել հետևյալ զեկուցումները, հանդիսություններն ու հանդիպումները.

1. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատակից Ահարոն Սալաղյանի հանդիպումը ուսանողների հետ:

2. «Տպավորություններ Հռոմի սրբավայրերից» թեմայով զեկուցել է տ. Զավեն եպս. Չինչինյանը:

3. Նոր տարվա տոնախմբությունը:

4. Վարդանանց տոնակատարությունը. զեկուցող՝ հոգևոր ճեմարանի գրաբար լեզվի և հայոց պատմության դասախոս Սամվել Անթոնյան:

Ուսանողները պտույտի են մեկնել Երեբունի, Ծաղկաձոր, Գեղարդ, Սարդարապատ, Օշական: Այցելել են Պետական պատկերասրահ, Մատենադարան, Կոմիտասի անվան պանթեոն: Հունիսի 8-ից ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկնելու են չորսօրյա պլտույտի՝ կենտրոն ունենալով Դիլիջան քաղաքը:

Ուսանողները հաճախ եղել են կինոթատրոններում, երաժշտական ներկայացումներում, Էջմիածնի և Երևանի համերգասրահներում:

Ս. Ստեփանոսի տոնին, տ. Հուսիկ սրբազանի ձեռամբ, սարկավագ են ձեռնադրվել Բ լսարանի յոթ ուսանողներ՝ Արծրուն Ավետիսյան, Լևոն Բաղդասարյան, Աղասի Բապուճյան, Սորին Մանդալյան, Կիրակոս Հովնանյան, Դերենիկ Սայյան, Վանիկ Տեր-Մկրտչյան: Ուրարակրության աստիճան է շնորհվել. Բ լսարանից՝ Բյուզանդ Գալայճյանին և Գրիգոր Հաճյանին, իսկ դպրության չորս աստիճան՝ Գ դասարանի ուսանողներ Վաչագան Ավետիքյանին, Խաչիկ Խարազյանին, Տիգրան Սահրադյանին, Կարապետ Տաքեսյանին, Հրաչ Օղլուգյանին և Արա Ճլուկյանին:

Ճեմարանի նախկին շրջանավարտներ Հակոբ սրկ. Խաչատրյանը և Հակոբ սրկ. Գրլլենճյանը ս/թ. մայիսի 13-ի իրենց դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությունը կատարել են հաջողությամբ և ստացել վկայական:

Համառոտ այս զեկուցագրից հետո տ. Հովհաննես ավագ քահանան մի անգամ ևս, հանուն տեսչության և դասախոսական կազմի, շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, որն Իր գահակալության 20 տարիների ընթացքում միշտ էլ ժամանակ է գտել Իր Հայրապետական Աթոռից իջնելու և, որպես ուսումնապետ, մտնելու ճեմարանի դասարաններից ներս:

Այնուհետև տեսուչ քահանա հայրը հրապարակում է 1975—1976 ուսումնական տարում ուսման մեջ առաջադեմ ուսանողների անունները, որոնք աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունները և այս առթիվ սահմանված նվերները.

Բ լսարան—9,52 միջինով առաջին է հանդիսանում Սորին սրկ. Մանդալյանը.
8,91 միջինով երկրորդ է հանդիսանում Կիրակոս սրկ. Հովնանյանը.
8,83 միջինով նույնպես երկրորդ է հանդիսանում Բյուզանդ Գալայճյանը:

Գ դասարան—8,25 միջինով առաջին է հանդիսանում Հրաչ Օղլուգյանը.
8,11 միջինով երկրորդ է հանդիսանում Տիգրան Սահրադյանը.
8,10 միջինով նույնպես երկրորդ է հանդիսանում Հովսեփ Պալըգյանը:

Բ դասարան—8,24 միջինով առաջին է հանդիսանում Ստեփան Դավթյանը.
8,03 միջինով երկրորդ է հանդիսանում Գագիկ Գարգալաջևը:

Նախապատրաստական դասարան—
8,16 միջինով առաջին է հանդիսանում Արա Տաքեսյանը.
8,14 միջինով նույնպես առաջին է հանդիսանում Հաճիմանուկ Գանձապետյանը.
7,48 միջինով երկրորդ է հանդիսանում Հակոբ Սագոյանը:

Մայրենի լեզվի մեջ ցուցաբերած առաջադիմության և օրինակելի վարքի համար տեսչությունը պարգևատրում է Վանիկ սրկ. Տեր-Մկրտչյանին և Սորին սրկ. Մանդալյանին:

Տեսուչ հոր հրավերով խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը՝ այս հանդիսավոր առիթով մի անգամ ևս իր օրհնությունն ու պատգամը տալու տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը:

Հայոց Հայրապետը մի անգամ ևս Իր բարձր գնահատությանն ու ջերմ օրհնությանն է արժանացնում հոգևոր ճեմարանի հարկի տակ տեսչության, դասախոսական կազմի կատարած նվիրյալ ու բարեխիղճ ուսումնա-դաստիարակչական աշխատանքները:

Այնուհետև, հայրական Իր ոգեշունչ խոսքն ու պատգամն ուղղելով ուսանողությանը, Հայոց Հայրապետը նրանց բացա-

ուրում է հոգևոր ու ազգային-հայրենասիրական ծառայության գեղեցկությունն ու կարևորությունը մեր հավատացյալ ժողովրդի ծոցում նաև այսօր և՛ հայրենիքի մեջ, և՛ մանավանդ սփյուռքում, որտեղ հայ եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո, նախախնամական առաքելություն է կատարում Քրիստոսի փառքի և մեր ժողովրդի հոգևոր մխիթարության համար:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Հոգևոր ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը և ուսանողությունը վերջում աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը: